ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«17» մայիսի 2019 թվականի № 107-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ, 54-րդ հոդվածներով, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործման նախագծի 2019 թվականի մայիսի 07-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 24 փորձաքննության դրական եզրակացությունը, հաշվի առնելով «ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊ ընկերության 2018 թվականի օգոստոսի 16-ի թիվ 003, 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 10 գրությունները և Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/602 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքից արդյունաբերական (շշալցում) նպատակով 0,77 լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 24282,7 մ^3 ածխաթթվային հանքային ջուր:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -602 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի կողմից փորձաքննություն անցած նախագիծ),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառումը՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

5/17/2019

X

VERIFIED OCSP 5/17/2019 17:31:12 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ